Դեղեր, բժշկական պարագաներ և սարքավորումներ՝ Լոս Անջելեսի Շրջանում հրդեհներից տուժած մարդկանց համար

Հաճախակի տրվող հարցեր

1. Ես կորցրել եմ իմ դեղերը: Ինչպե՞ս կարող եմ նորից ձեռք բերել դրանք:

Եթե տուժել եք անտառային հրդեհից, Ձեր դեղերը փոխարինելու մի քանի տարբերակ կա: Պարտադիր չէ, որ Դուք ունենաք Ձեր դեղատոմսերը կամ Ձեր դեղատոմսով տրվող դեղերի տուփերը: Նկատի ունեցեք. եթե Ձեր դեղամիջոցը վերահսկվող նյութ է, օրինակ՝ ուժեղ ցավազրկող, կարդացեք 2-րդ հարցը:

- **Գնացեք դեղատուն**
    - Եթե հնարավոր է, զանգահարեք կամ գնացեք այն դեղատուն, որտեղից սկզբում վերցրել եք Ձեր դեղերը:
    - Եթե Ձեր դեղատունը ցանցի մաս է, բայց փակ է, կամ Դուք չեք կարող մտնել այնտեղ, գնացեք նույն ցանցի ցանկացած այլ դեղատուն: Նրանք կարող են փնտրել Ձեր տվյալները իրենց համակարգում: Եթե չեք կարողանում գնալ Ձեր դեղատուն կամ դեղատների ցանց, կարող եք գնալ ցանկացած դեղատուն, որը բաց է: Դեղատունը կարող է փոխանցել Ձեր դեղատոմսերը: Եթե նրանք չկարողանան կապ հաստատել Ձեր մշտական դեղատան կամ բժշկի հետ, հնարավոր է, որ կարողանան Ձեզ տալ բավականաչափ դեղորայք, որպեսզի օգտագործեք, մինչև կարողանաք ստանալ Ձեր դեղերի սովորական պաշարը: Սա թույլատրվում է արտակարգ իրավիճակներում, ինչպիսիք են Լոս Անջելեսի հրդեհները. տես՝ pharmacy.ca.gov/licensees/state_of_emergency_la.pdf:

Նշում: Այսպիսի արտակարգ իրավիճակներում, որտեղից էլ որ վերցնեք Ձեր դեղատոմսով դեղերը, Դուք պետք է վճարեք միայն Ձեր սովորական համավճարը: Սա վերաբերում է նույնիսկ այն դեպքերին, երբ դեռ վաղ է դեղատոմսով կանոնավոր տրվող դեղերի հաջորդ պաշարի համար, կամ եթե գնում եք դեղատուն, որը Ձեր ցանցում չէ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ dmhc.ca.gov/Resources/Newsroom/PressReleases/January9,2025.aspx:

- **Զանգահարեք Ձեր ապահովագրական ընկերություն**: Արտակարգ իրավիճակների ժամանակ ապահովագրական ընկերությունները կարող են Ձեր դեղատոմսերն ուղարկել դեղատուն և թույլատրել դեղերի վաղաժամ դուրսգրում: Նրանք կարող են նաև օգնել Ձեզ բժշկական պարագաների և սարքավորումների հարցում: Սա վերաբերում է նաև Medicare-ի և Medicare Advantage-ի բոլոր ծրագրերին:
    - *Տեղեկություններ L.A. Care-ի անդամների համար՝* https://www.lacare.org/members/health-news-advisories/los-angeles-wildfires-2025-member-services-updates
    - *Տեղեկություններ Health Net-ի անդամների համար՝* https://www.healthnet.com/content/healthnet/en_us/news-center/news-releases/2025-01-08-health-net-providing-special-assistance-members-affected-palisades-fire.html
    - *Տեղեկություններ Medicare-ի անդամների համար՝* https://www.cms.gov/files/document/dme-emergency-provider-response-support-tool.pdf
- **Կապ հաստատեք Ձեր բժշկի հետ:** Եթե Դուք կարող եք դիմել Ձեր բժշկական մատակարարին կամ կլինիկա, ասեք նրանց, որ կարիք ունեք, որ դեղատոմսով դեղերը շտապ դուրս գրվեն:
- **Օգտվեք հեռաառողջապահական ծառայությունից**, եթե վերը նշվածներից ոչ մեկը չի գործում կամ եթե նոր դեղատոմսի կարիք ունեք: Տե՛ս 4-րդ և 5-րդ հարցերը:

2. Իմ կորած դեղերը վերահսկվող նյութեր են: Ինչպե՞ս կարող եմ նորից ձեռք բերել դրանք:

- Եթե կախվածության՝ դեղորայքի օգնությամբ բուժման (MAT) կարիք ունեք, զանգահարեք MAT Խորհրդատվական գծին՝ դեղատոմս ստանալու համար: Գիծը գործում է շաբաթը 7 օր՝ առավոտյան 8-ից մինչև կեսգիշեր՝ 213-288-9090:
- Այլ վերահսկվող նյութերի համար խնդրում ենք զանգահարել այն մատակարարին, որը սովորաբար դրանք նշանակում է Ձեզ: Եթե Դուք չեք կարող կապ հաստատել նրանց հետ, խնդրում ենք այցելել շտապ բուժօգնության կետ (urgent care):

3. Ինձ անհանգստացնում է իմ նորից վերցրած դեղերի արժեքը: Արդյո՞ք կա որևէ պաշտպանություն, կամ հասանելի՞ է ֆինանսական օգնություն:

Այո՛: Դա կախված է այն հանգամանքից՝ արդյոք ունեք բժշկական ապահովագրություն, թե ոչ:

- Եթե Դուք ունեք բժշկական ապահովագրություն
  - Բժշկական ապահովագրության բոլոր ծրագրերը պետք է փակեն անտառային հրդեհների հետևանքով տուժած անդամների այն դեղատոմսով դեղերի, բժշկական սարքավորումների և պարագաների ծախսերը, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են: Այսպիսի արտակարգ իրավիճակներում, որտեղից էլ որ վերցնեք Ձեր դեղատոմսով դեղերը, Դուք պետք է վճարեք միայն Ձեր սովորական համավճարը: Սա վերաբերում է նույնիսկ այն դեպքերին, երբ դեռ վաղ է դեղատոմսով կանոնավոր տրվող դեղերի հաջորդ պաշարի համար, կամ եթե գնում եք դեղատուն, որը Ձեր ցանցում չէ: Տես՝ dmhc.ca.gov/Resources/Newsroom/PressReleases/January9,2025.aspx:

- Եթե Դուք չունեք բժշկական ապահովագրություն, կամ եթե Ձեր դեղերի համար Ձեր ապահովագրությունը չի վճարում, կամ եթե ի վիճակի չեք վճարել համավճարները՝
  - Օգտվեք **Շտապ դեղատոմսերի համար օգնության ծրագրից (EPAP), եթե իրավասու եք**. եթե Դուք ապահովագրություն չունեք և ապրում եք հրդեհից տուժած որոշակի տարածքներում, հնարավոր է, որ բավարարեք EPAP-ից օգտվելու պայմանները: EPAP-ն օգնում է անվճար փոխարինել դեղատոմսով տրվող դեղերը, բժշկական պարագաները և երկարատև օգտագործման բժշկական սարքավորումները, որոնք կորել կամ վնասվել են արտակարգ իրավիճակների կամ տարհանման ժամանակ: Ծրագիրը տրամադրում է նաև անվճար պատվաստանյութեր: Զանգահարեք EPAP թեժ գծին՝ 1-855-793-7470, որպեսզի ստուգեք՝ արդյոք իրավասու եք, և գրանցվեք: Իմացեք ավելին aspr.hhs.gov/EPAP կայքում:
  - **Օգտվեք Շրջանի ծրագրից:** Լոս Անջելեսի Շրջանն առաջարկում է բժշկական ապահովագրության տարբերակներ ցածր եկամուտ ունեցող բնակիչների համար: Այցելեք LA County's Health Services կամ զանգահարեք **2-1-1**:
  - **Խոսեք Ձեր դեղագործի հետ**: Հնարավոր է, որ դեղատներն ունենան զեղչային ծրագրեր կամ ընդունեն կտրոններ համացանցային աղբյուրներից, օրինակ՝ GoodRx:

4. Ինչպե՞ս կարող եմ օգտվել հեռաառողջապահությունից՝ նոր դեղատոմս ստանալու համար, եթե դրա կարիքն ունենամ:

- **Ծրագրի կողմից տրամադրվող հեռաառողջապահություն:** Մի շարք բժշկական ապահովագրական ընկերություններ առաջարկում են անվճար կամ ցածր արժեքով հեռաառողջապահական ծառայություններ: Զանգահարեք Ձեր քարտի վրայի համարով կամ այցելեք Ձեր ապահովագրական ծրագրի կայք:
- **Teladoc Health-ն** առաջարկում է անվճար հեռաառողջապահական այցեր օրը 24 ժամ՝ 1-855-225-5032 հեռախոսահամարով: Ծառայությունները ներառում են այնպիսի խնդիրների բուժում, ինչպիսիք են շնչառական վարակները, ալերգիաները, սինուսների խնդիրները և մրսածության կամ գրիպի ախտանիշները: Teladoc-ը կարող է նաև օգնել դեղատոմսով տրվող այն դեղերի հարցում, որոնք չվերահսկվող նյութեր են: Հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ teladochealth.com/info/disaster-hotline:
- **GoodRx-ն** առաջարկում է անվճար առցանց առողջապահական այցեր: Լոս Անջելեսի բնակիչները, որոնք կարիքի մեջ են, կարող են օգտագործել LA-GOODRX-CARE ծածկագիրը տարբեր խնդիրների համար՝ ներառյալ դեղորայքի դուրսգրման հարցում օգնության: Տեղեկությունների համար այցելեք՝ goodrx.com/care:

5. Ինչպե՞ս կարող եմ օգնություն ստանալ իմ դեղատան կամ առողջապահական ծրագրի հետ հաղորդակցվելու հարցում:

- **Այցելեք Աղետների ռեսուրսների կենտրոն** (DRC): DRC-ի բուժակները կարող են օգնել ընտանիքներին տեղեկատվության, կրթության և առողջական խնդիրների հետ կապված ուղեգրերի հարցում: Նրանք կարող են նաև օգնել մարդկանց ձեռք բերել դեղորայք՝ կապ հաստատելով նրանց դեղատան կամ մատակարարի հետ: Անհրաժեշտության դեպքում բուժակները կօգտագործեն Հանրային Առողջության Վարչության հեռաառողջապահական ծառայությունը՝ ընտանիքներին աջակցելու համար՝ տրամադրելու նոր դեղատոմսեր, մինչև նրանք կարողանան կապ հաստատել իրենց մշտական բժշկի հետ:

Արևմտյան մասի գրասենյակ՝
UCLA Research Park West
10850 West Pico Blvd.
Los Angeles, CA 90064
Բաց է ամեն օր՝ առավոտյան 9-ից երեկոյան 8-ը:

Արևելյան մասի գրասենյակ՝
Pasadena City College Community Education Center
3035 East Foothill Blvd.
Pasadena, CA 91106
Բաց է ամեն օր՝ առավոտյան 9-ից երեկոյան 8-ը:

Հանրային Առողջության Վարչությունը ցանկանում է իմանալ՝ արդյոք դեղատները կամ ապահովագրողները չեն հետևում աղետներին արձագանքելու կանոններին: Եթե Ձեզնից ավելի շատ գումար է գանձվել, քան Ձեր սովորական համավճարը, կամ ունեք այլ խնդիրներ, խնդրում ենք հայտնել այդ մասին՝ այցելելով https://forms.office.com/g/BQaAFYsQrA կայք կամ սկանավորելով QR կոդը:

Հիշեք

- **Դուք մենակ չեք:** Հանրային գործակալությունները, շահույթ չհետապնդող կազմակերպությունները, դեղատները և ապահովագրողներն աշխատում են միասին՝ օգնելու Ձեզ դեղորայք ստանալ արտակարգ իրավիճակների ժամանակ:
- **Օգնություն խնդրեք:** Եթե դեղեր ձեռք բերելու կամ դեղերի համար վճարելու դժվարություններ ունեք, տեղեկացրեք մեզ:
- **Ձեզ մոտ պահեք կարևոր տեղեկությունները:** Եթե հնարավոր է, Ձեզ մոտ ունեցեք Ձեր նույնականացման քարտը (ID) և բժշկական ապահովագրության քարտերը: Եթե դրանք չունեք, հաճախ դեղագործներն ու կլինիկաները կարող են փնտրել Ձեր տվյալները:

Լրացուցիչ տեղեկությունների կամ օգնության համար դիմեք **Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն 1-833-540-0473** հեռախոսահամարով կամ այցելեք publichealth.lacounty.gov/media/wildfire: Հետևեք մեր սոցիալական էջերին՝ իրական ժամանակում նորություններն իմանալու համար:

Եղեք ապահով և հիշեք, որ հասանելի է օգնություն՝ ապահովելու համար, որ Դուք ունենաք Ձեզ անհրաժեշտ դեղերը: